*Հարգելի՛ փաստաբաններ,*

Ձեր անդամավճարը կարող եք վճարել ստորև նշված վճարային համակարգերից ցանկացածի միջոցով.

**1.**



*Փաստաբանների պալատի դրամային հաշվարկային հաշիվներին վճարում (փոխանցում) կատարելու միջոցով*

| | | |
|---|---|---|
| ԱՐԱՐԱՏԲԱՆԿ | «Արարատբանկ» ԲԲԸ | 1510002794720100 |
| AMERIABANK | «Ամերիաբանկ» ՓԲԸ | 1570022271950100 |

**2.**



*Փաստաբանների պալատի դրամարկղում*
*վճարում կատարելու միջոցով*

Փաստաբանների պալատն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը 10:00-ից 18:00-ն: Ընդմիջում՝ ժամը 13:00-ից 14:00-ն:

**3.**



*Վճարային պլաստիկ քարտերի միջոցով*

Փաստաբանը կարող է իր անդամավճարը վճարել Փաստաբանների պալատի www.advocates.am կայքի՝ իր անձնական էջում առկա ***անդամավճարի վճարման առցանց հավելվածի*** միջոցով, որտեղ արտացոլվում է այդ պահի դրությամբ փաստաբանի անդամավճարի պարտքի (կանխավճարի) չափը: Վճարում կատարելու համար անհրաժեշտ է մուտք գործել անձնական էջ և սեղմել *«Վճարել»* կոճակը:

*Հ.Գ. Անձնական էջի մուտքանվան և գաղտնաբառի վերաբերյալ տեղեկատվությունը կարող եք ստանալ փաստաբանների պալատի աշխատակազմից:*

**4.**



*ԻԶԻ ՓԵՅ (EASYPAY) վճարային տերմինալների միջոցով*

Փաստաբանների պալատին ուղղված վճարումները հնարավոր է կատարել ԻԶԻ ՓԵՅ համակարգի ցանկացած վճարային տերմինալով:

*Հ.Գ. Տերմինալով վճարումներից «Իզի Փեյ» ՍՊ ընկերությունը վճարումը կատարողից տերմինալ մուտքագրելու միջոցով գանձում է միջնորդավճար:*

---

*Ինչպե՞ս վճարում կատարել ԻԶԻ ՓԵՅ (EASYPAY) վճարային տերմինալով.*
Քայլ 1 - **տերմինալի գլխավոր էջում ընտրել «Բոլոր ծառայությունները» սենսորային կոճակը.**
Քայլ 2 - **բացված ցանկից (2-րդ էջ) սեղմել ՀՀ փաստաբանների պալատի տարբերանշանով սենսորային կոճակը և,**
**ընտրելով համապատասխան վճարման տեսակը՝ կատարել համակարգի կողմից առաջարկվող հրահանգները:**

**5.**



*ԹԵԼ-ՍԵԼ (TELCELL) վճարային տերմինալների միջոցով*

Փաստաբանների պալատին ուղղված վճարումները հնարավոր է կատարել ԹԵԼ-ՍԵԼ համակարգի ցանկացած վճարային տերմինալով:

*Հ.Գ. Տերմինալով վճարումներից «ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲ ընկերությունը վճարումը կատարողից տերմինալ մուտքագրելու միջոցով գանձում է միջնորդավճար:*

---

*Ինչպե՞ս վճարում կատարել ԹԵԼ-ՍԵԼ (TELCELL) վճարային տերմինալով.*
Քայլ 1 - **տերմինալի գլխավոր էջի ստորին հատվածում ընտրել «Այլ» սենսորային կոճակը.**
Քայլ 2 - **բացված էջի վերին հատվածում ընտրել «Այլ ծառայություններ» սենսորային կոճակը.**
Քայլ 3 - **բացված ցանկից (2-րդ էջ) սեղմել ՀՀ փաստաբանների պալատի տարբերանշանով սենսորային կոճակը և,**
**ընտրելով համապատասխան վճարման տեսակը՝ կատարել համակարգի կողմից առաջարկվող հրահանգները:**